վերջնագիր՝ պահանջելով 48 ժամայ ընթացքում ընդունել Բաքուում մշակուած համաձայնագիրը՝ սպառնալով, հակառակ պարագային, «դիմել զինուորական ոյժի»։

Համագումարը երկարօրէն քննեց ստեղծուած դրութիւնը և համոզելով, որ դրսից ոչ մի օգնութիւն չի կարող ստանալ—անգլիացիները պաշտպանում էին աղրբէջանցիներին, իսկ Հայաստանի կառավարութիւնը ի վիճակի չէր լուրջ օգնութիւն հասցնելու — այլ և կշռելով սեփական ուժերը՝ խոհեմութիւն համարեց դիջելու և օգոստ. 15–ին որոշեց ընդունել Բաքուի համաձայնագիրը։ Յաջորդ օր, Օգոստ. 16–ին նրա 16 ներկայացուցիչները գնացին Շուշի, Սուլթանովի մօտ և օգոստ. 22–ին ստորագրեցին հետևեալ համաձայնագիրը.

«Նկատելով, որ Լեռնային Ղարաբաղի ճակատագրի հարցը լուծելու է Հաշտութեան Վեհաժողովում, որ ամէն մի ընդհարում վնասակար է Ղարաբաղի ազգաբնակութեան համար, որ Ղարաբաղի հարցը ինչ ձևով էլ լուծելու լինի, հայերն ու մահմեդականները ապրելու են միասին, Ղարաբաղի Հայոց 7րդ համագումարը իր 1919թ. օգ. 15–ի առաւօտեան նիստում որոշեց կանգ առնել Ադրբէջանի Հանրապետութեան կառավարութեան հետ կայացուած համաձայնութեան հետևեալ կէտերի վրա.

1. Սոյն ժամանակաւոր համաձայնութիւնը կողմերն ընդունում են մինչև որ այդ հարցը վճռուի Հաշտութեան Վեհաժողովում, որպիսի լուծումը հաւասարապէս պարտադիր է երկու կողմերի համար էլ։

2. Ղարաբաղի Շուշի, Ջիվանշիր և Ջիբրայիլ գաւառների հայերով բնակեցուած լեռնային մասը (Դիզակ, Վարանդա, Խաչէն, Ջրաբերդ) ժամանակաւորապէս իրեն համարում է Ադրբէջանի Հանրապետութեան սահմաններում։

3. Շուշիի, Ջիվանշիրի և Ջիբրայիլի գաւառները մնում են իրրև առանձին վարչական միաւոր Ղարաբաղի ընդհանուր–նահանգապետութեան և նրա ներքին կազմակերպութիւնն այնպէս է, որ լեռնային հայկական մասում վարչութիւնը նշանակւում է հայերից՝ փոքրամասնութեան իրաւունքների երաշխաւորութեամբ։

4. Ղարաբաղի լեռնային մասում (Դիզակ, Խաչէն, Վարանդա և Ջրաբերդ) վարչական պաշտօնատար անձինք նշանակւում են խորհրդի հայ անդամների առաջարկութեամբ։

5. Ղարաբաղի ընդհանուր–նահանգապետութեան կից հիմնւում է 6 հոգինոց մի խորհուրդ — 3 հայ և 3 մահմեդական։

6. Խորհրդի հայ անդամները ընտրւում են Լեռնային Ղարաբաղի հայ ազգաբնակութեան համագումարից։ Համագումարն իրաւունք ունի վերընտրելու։

7. Միջազգային բնոյթ ունեցող սկզբունքային բոլոր հարցերը չեն կարող կիրառուել կեանքում առանց նախօրօք խորհրդում քննելու։

8. Խորհուրդն ունի նախաձեռնութեան իրաւունք ընդհանուր–նահանգապետութեան կարգաւորման ու կառավարութեան վերաբերող հարցերում։

9. Խորհուրդն ունի ընդհանուր–նահանգապետութեան վարչութեան վրա հսկելու ու հակակշռելու իրաւունք՝ առանց վարչութեան գործողութիւններին խառնուելու իրաւունքի։